ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 05.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2021թ. թիվ 26/26/1138-2021 գրությամբ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 26.01.2021թ. թիվ Ե/40/162-21 գրության հիման վրա 30.01.2021թ. թիվ 26/26/1138-2021 գրությամբ նախաձեռնել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն 15.02.2021թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևայլը.

«2020թ. սեպտեմբերի 14-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի ձեռքբերման «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 45 օրացուցային օրը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել:

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում

նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 5.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2021թ. գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 և 2.1.7.-րդ կետերի պահանջները:

Այնուհետև, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2020թ. սեպտեմբերի 14-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի ձեռքբերման «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով պայմանագիր:

Վերը նշված պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 22.01.2021թ. գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 2.1.3 և 2.1.7 կետերի պահանջները, ըստ որի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը երկու դեպքերից մեկի առկայության դեպքում՝ եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում կամ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել:

Գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի միջև լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի ձեռքբերման նպատակով կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով պայմանագիրը ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Եվ այսպես, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է՝ դեռևս 25.09.2020թ. (այսինքն պայմանագիրը կնքելուց տաս օր հետո) «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից

մատակարարվել է պայմանագրով նախատեսված ողջ ապրանքը, այդ թվում նաև 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված Unigram KB-30T տեսակի կշեռքը:

Այնուհետև, գրեթե չորս ամիս չստանալով արձագանք մատակարարված ապրանքի վերաբերյալ՝ այդ թվում բացասական եզրակացություն, անսպասելի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից ՍՊԸ-ն ստանում է ծանուցում թիվ ՍՑ-ՆԳ-2021/23 ընթացակարգ նախաձեռնելու վերաբերյալ, ըստ որի ՍՊԸ-ին ցանկանում են ներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»՝ այն հիմքով, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված Unigram KB-30T տեսակի կշեռքի հեռակառավարման վահանակն ու մարտկոցը:

Մինչդեռ ապրանքը մատակարարվել է դեռևս 25.09.2020թ., իսկ Պայմանագրով մատակարարման վերջնաժամկետն էր սահմանված Պայմանագիրը կնքելուց հետո 45 օրացուցային օրը /01.11.2020թ./, այսինքն, եթե Պատվիրատուն սահմանված ժամկետում՝ առաջնորդվելով Պայմանագրով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, իրենց վերապահված պարտականություններով ՍՊԸ-ին Պայմանագրի 5-րդ բաժնով նախատեսված 7 աշխատնքային օրյա ժամկետում տրամադրեին ապրանքի որակի վերաբերյալ բացասական եզրակացություն և հաշվի առնելով, որ ՍՊԸ-ի կողմից ապրանքը մատակարարվել էր դեռևս սահմանված վերջնաժամկետից 1 ամիս առաջ, ուստի Պատվիրատուն պարտավոր էր գոնե մինչև Պայմանագրով սահմանված վերջնաժամկետի ավարտը Գնորդի համար ընդունելի ժամկետում առաջարկել ՍՊԸ-ին փոխարինել ապրանքը կամ վերացնել արձանագրված անհամապատասխանությունները, ինչը չի կատարվել: Ավելին, որևէ կերպ չարձագանքելով 25.09.2020թ. մատակարարված ապրանքին, Պատվիրատուն միայն դեռևս 22.01.2021թ. է միակողմանի լուծել նշված պայմանագիրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև մի կարևոր հանգամանք: Վերոհիշյալ պայմանագրի լուծման գրությամբ Պատվիրատուն նշել է, որ պայմանագիրը լուծում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը: Ինչպես արդեն նշել ենք, համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Միևնույն ժամանակ, պայմանագրի 2.1.7.1 հստակ սահմանում է, թե Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական որ դեպքերում է համարվում, դրանք են՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել:

Այսպիսով, պայմանագիրը լուծելիս՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն առնվազն պարտավոր է նշել, թե Վաճառողի կողմից պայմանագրի կոնկրետ ինչ էական խախտում է թույլ տրվել ՍՊԸ-ի կողմից՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, թե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել: Ակնհայտ է, որ այս երկու հիմքերը միաժամանակ չեն կարող առկա լինել: Սակայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չի մատնանշվել, թե կոնկրետ որ հիմքի առկայությունն է հանգեցրել այս պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչը նշված պայմանագրի լուծումը դարձնում է ոչ իրավաչափ և կամայական:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում նաև հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է. Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ փաստում ենք, որ կողմերի միջև կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20 ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Հանձնաժողովի կողմից չի

հրապարակվել www.gnumner.am կայքում «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Բավարար է ուսումնասիրել www.gnumner.am կայքի «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժինը, որպեսզի պայմաններում կհայտնաբերվի, որ այդպիսի ծանուցում այդ բաժնում ընդհանրապես առկա չէ:

Այսպիսով, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել նաև Պայմանագրի 8.9 կետի դրույթով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները /պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ/:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ վերը նշված հիմնավորումը ներառվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից կայացրած ՍՑ-ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի որոշման մեջ, որի արդյունքում ՍՑ-ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի մերժվել են և «Գրիտիգ» ՍՊԸ-ն և «Արտ Պլաս» ՍՊԸ-ն չեն ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամփոփելով վերը նշված բոլոր փաստական հանգամանքները՝ կարող ենք փաստել, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից սույն գործի շրջանակներում թույլ են տրվել բազմաթիվ խախտումներ:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին չվերագրել «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/23 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 3-4 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.01.2021թ. թիվ Ե/40/162-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից սեփական կարիքների համար լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն: «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է թիվ 01/289 պայմանագիրը՝ 4 102 600 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Պայմանագրում մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ Unigram KB-30T տեսակի կշեռքը, որի ընդհանուր արժեքը կազմում է 2 983 800 ՀՀ դրամ՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել տվյալ ապրանքի բաղկացուցիչ մաս կազմող ինֆրակարմիր հեռակառավարման վահանակն ու լրացուցիչ մարտկոցը:

Համաձայն վերոնշյալ պայմանագրի

- 2.1.3 կետի համաձայն՝ եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

բ) Գնորդը պարտավոր է հրաժարվել հանձնած ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

- 2.1.7 կետի համաձայն՝ «Գնորդը պարտավոր է միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի)», եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ սեպտեմբերի 14-ին կնքված թիվ 01/289 պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/23 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/23 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/23 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի միջև 14.09.2020թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը. «Կշեռք կռունկային Unigram KB 30T կամ համարժեքը, «.....Ինֆրակարմիր հեռակառավարման վահանակ...., լրացուցիչ մարտկոց»:

3. Նույն հավելվածով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից հաշված 45 օրացուցային օրը:

4. Պատվիրատուն «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2021թ. թիվ Ե/13/97-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի (այսուհետ՝ ապրանք) ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 14-ին կնքվել է թիվ 01/289 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) 4 102 600 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ Unigram KB 30T տեսակի կշեռքը, որի ընդհանուր գինը կազմում է 2 983 800 ՀՀ դրամ, «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել տվյալ ապրանքի բաղկացուցիչ մաս կազմող ինֆրակարմիր հեռակառավարման վահանակը ու լրացուցիչ մարտկոցը:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

-2.1.3 կետի համաձայն՝ եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

բ) Գնորդը պարտավոր է հրաժարվել հանձնած ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

-2.1.7 կետի համաձայն՝ «Գնորդը պարտավոր է միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի)», եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 14-ին կնքած թիվ 01/289 պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 22.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2021թ. թիվ 26/26/1138-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 26.01.2021թ. թիվ Ε/40/162-21

գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի 15.02.2021թ. դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի միջև 14.09.2020թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը. «Կշեռք կռունկային Unigram KB 30T կամ համարժեքը, «.....Ինֆրակարմիր հեռակառավարման վահանակ...., լրացուցիչ մարտկոց»:

Նույն հավելվածով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից հաշված 45 օրացուցային օրը:

<u>Պատվիրատուն «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2021թ. թիվ Ե/13/97-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.</u>

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար լաբորատոր, չափիչ, հսկիչ, ստուգիչ սարքերի, գեներատորի կռունկային կշեռքի ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 14-ին կնքվել է թիվ 01/289 պայմանագիրը 4 102 600 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 1 հատ Unigram KB 30T տեսակի կշեռքը, որի ընդհանուր գինը կազմում է 2 983 800 ՀՀ դրամ, ***<u>«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել տվյալ ապրանքի բաղկացուցիչ մաս կազմող ինֆրակարմիր հեռակառավարման վահանակը ու լրացուցիչ մարտկոցը:</u>***

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

-2.1.3 կետի համաձայն՝ եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

բ) Գնորդը պարտավոր է հրաժարվել հանձնած ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

-2.1.7 կետի համաձայն՝ «Գնորդը պարտավոր է միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի)», եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 14-ին կնքած թիվ 01/289 պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 22.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,

ՍՑ-ՆԳ-2021/23 ծածկագրով ընթացակարգի բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 17.02.2021թ. anpp@anpp.am էլ. փոստի միջոցով դիմել է Պատվիրատուին՝ հետևյալ նամակով.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի միջև 14.09.2020թ. կնքված թիվ «01/289» ծածկագրով պայմանագիրը Պատվիրատուի կողմից 22.01.2021թ. լուծվել է:

Կից Ձեզ է տրամադրվում Ընկերության կողմից ՍՑ-ՆԳ-2021/23 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 17.11.2020թ. էլ. փոստի միջոցով Ընկերությանն

ուղղված գրությունը, որտեղ մասնավորապես նշվել է, որ Ընկերության կողմից մատակարարված Unigram KB-30T կշեռքը ենթակա է վերադարձման:

Խնդրում եմ պարզաբանել՝ ինչ հիմքով է վերադարձվել ապրանքը և միաժամանակ տրամադրել Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից Unigram KB-30T կշեռքը մատակարարելու փաստը հավաստող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ հանձնման-ընդունման արձանագրությունը, ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ երկկողմ հաստատված փաստաթուղթը: Իսկ եթե մատակարարված ապրանքը չի համապատասխանել պայմանագրի պայմաններին, ապա դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը»:

Ի պատասխան վերը նշված էլեկտրոնային նամակի՝ Պատվիրատուի կողմից 18.02.2021թ. էլ. փոստի միջոցով տրամադրվել են հետևյալ փաստաթղթերը.

1. 25.09.2020թ. N 1 արձանագրությունը՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման, հետևյալ ապրանքների մասով՝

- կշեռք լաբորատոր BE-10002 սարքավորում,
- կշեռք կռունկային Unigram KB-30T կամ համարժեք:

2. Պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը՝ համաձայն որի՝ 25.09.2020թ. հանձնման-ընդունման նպատակով «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն գնորդին հանձնեց 2 հատ կշեռք,

3. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 12.10.2020թ. կազմված մուտքային վերահսկողության թիվ 10-20-294 ակտը, համաձայն որի՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է KB-30T Unigram տեսակի կշեռքը, որտեղ առկա է տեխնիկական բնութագրի հետ անհամապատասխանություն՝ բացակայում է ինֆրակարմիր հեռակառավարման վահանակը և լրացուցիչ մարտկոցը:

Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2021/23 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է պայմանագրով նախատեսված ողջ ապրանքը, այդ թվում նաև 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված Unigram KB-30T տեսակի կշեռքը: Այնուհետև, գրեթե չորս ամիս չստանալով արձագանք մատակարարված ապրանքի վերաբերյալ՝ այդ թվում բացասական եզրակացություն, անսպասելի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից Ընկերությունը ստանում է ծանուցում թիվ ՍՑ-ՆԳ-2021/23 ընթացակարգ նախաձեռնելու վերաբերյալ, ըստ որի Ընկերությանը ցանկանում են ներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում»՝ այն հիմքով, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված Unigram KB-30T տեսակի կշեռքի հեռակառավարման վահանակն ու մարտկոցը:

Մինչդեռ ապրանքը մատակարարվել է դեռևս 25.09.2020թ., իսկ Պայմանագրով մատակարարման վերջնաժամկետ էր սահմանված Պայմանագիրը կնքելուց հետո 45 օրացուցային օրը /01.11.2020թ./»:

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ հետևյալը.

Պայմանագրի 2.2.4 ենթակետով սահմանվել է, որ ***ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:***

Պայմանագրի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված ***փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում*** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ ***եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:*** Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 5.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի

5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***<u>Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,</u>*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն***.

3) ***եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝***

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված ***գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:***

Այսպիսով՝ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ գործող իրավական նորմերով սահմանվել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները:

Եվ այսպես, վկայակոչված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, այնուհետև Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը, որից հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչը տրամադրում է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն, և ***<u>եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին</u>***:

Այսպիսով՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն Պատվիրատուին է տրամադրել 25.09.2020թ. իր կողմից հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման N 1 արձանագրությունը (Հավելված 3) և Unigram KB-30T տեսակի կշեռքը 25.09.2020թ. Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը (Հավելված 3.1)՝ երկկողմ հաստատված, մինչդեռ Պատվիրատուի կողմից չի տրամադրվել Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրության չստորագրման համար հիմք հանդիսացած Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանված ձևին համապատասխան բացասական եզրակացությունը, հետևաբար նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Պայմանագրի էական խախտման փաստը և որպես արդյունք՝ Պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափությունը:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2021թ. թիվ 26/26/1138-2021 գրությամբ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**